ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

№ 30
16.11.2016թ.

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍՏԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 32 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թ. հոկտեմբերի 7-ի թիվ 197-Ա որոշումը.

Որոշում եմ՝

2016թ. նոյեմբերի 16-ին ստանձնում եմ Լոռի Բերդ համայնքի ղեկավարի լիազորությունները:

Համայնքի ղեկավար՝ Խ.Բլայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 31
18.11.2016թ.

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ Փ. 50 Շ. 13 ԲՆ ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՅԻԿ ՄԻՇԻԿԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 06-044-0017-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՝ԱՇՈՏ ԵՐԿԱԹ ԹԻՎ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ՝ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Արայիկ Ռուշանյանի դիմումը ՝և ժառանգության իրավունքի վկայագիրը՝հաստատված Ստեփանավանի նոտ. գրասենյակի կողմից ,սեղանամատյան թիվ 2551. տրված21.05.1993թ.՝համայնքի ղեկավարի կողմից տրված սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումից քաղվածքը և ԱՁ <<ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ >> գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնի կողմից տրված հողամասի տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >>ՀՀ օրենքի2-րդ և 3-րդ հոդվածներով,<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ 510-Ն օրենքով՝ ՀՀ կառավարության 29.12.2005թ.թիվ 2387 որոշմամբ՝
Որոշում եմ՝.

1.Վերականգնել Լոռի Բերդ համայնքի, Աշոտ Երկաթ փող. թիվ 40 հասցեում գտնվող 242,47 քմ հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը՝
ա/ Լոռի Բերդ համայնքի Աշոտ Երկաթ փող. թիվ 40 հասցեի հողամասի մակերեսը 242,47.քմ.
բ/հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից 242,47քմ մակերեսով հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արայիկ Ռուշանյանին և օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը,որը չի գտնվում ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում , չի գտնվում ինժիներատրանսպորտային օբեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Արայիկ Ռուշանյանին:
3.Արայիկ Ռուշանյանի կողմից Լոռի Բերդ համայնքի Աշոտ Երկաթ փող. Թիվ 40 հասցեում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող,

սրանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող հողամասը՝ համաձայն հավելվածի ճանաչել նրա սեփականության իրավունքը:

4.Հաստատել 06-044-0017-0005 ծածկագրի տակ գտնվող հողամասի փոստային հասցեն՝ Լոռու մարզ, Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փող. թիվ 40:

5.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 18.11.2016 թ. թիվ 29 որոշումը:

6.Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ ԿԱԱԳ կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՆԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԲԱԼԱՅԱՆ